ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ. ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանի ծննդյան և աշխատանքային գործունեության նշակալից տարեդարձին է ուղղված մեր այս շնորհավորական գնահատանքի խոսքը:

Լ. Երնջակյանի նվիրումը Արևելքին, նրա մասնագիտական կողմնորոշումը զբաղվելու հայ-արևելյան երաժշտական կապերի խնդիրներով պատահական չէ: Նա ծնվել է արևելագետներ Վարդգես Երնջակյանի և Սոնա Օդաբաշյանի ընտանիքում, որտեղ ընդհանուր խոսակցությունների ոլորտում միշտ հնչել է մեղեդային հնչերանգներով հարուստ Արևելքի պոետների բանաստեղծական խոսքը:

1968-ին ավարտելով Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցը՝ Լ. Երնջակյանն ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-ստեղծագործական բաժնի՝ պրոֆեսոր Ռոբերտ Աթայանի դասարանը, գերազանցությամբ ավարտել 1973-ին՝ ստանալով «երաժշտագետ-հետազոտողի» որակավորում:

Դեռևս 1973-ին կազմված՝ «ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագրի» շրջանակներում կարևորվել էր հայ ժողովրդական, գուսանաշուղական և հոգևոր երաժշտության ու Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի երկրների ժողովրդական երաժշտության փոխազդեցությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ճիշտ երեք տարի անց՝ 1976-ին, Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրա է ընդունվում Լ. Երնջակյանը, ով 1980-ին ավարտում է ասպիրանտուրան և աշխատանքի անցնում ինստիտուտում՝ այդ օրվանից հարազատ գիտական օջախի հետ կապելով իր գիտաստեղծագործական կյանքի երեք և կես տասնամյակները:

1982-ին Լ. Երնջակյանը Տաշքենդի Համզայի անվան արվեստագիտության ինստիտուտում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Մուղամաթի արվեստը հայ-իրանական երաժշտական կապերի տեսանկյունից» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ատենախոսության գիտական ղեկավարի՝ Ուզբեկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Բ. Ասաֆևի մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր Տամարա Վիզգոյի գնահատմամբ՝ «Լ. Երնջակյանի մի քանի տարիների աշխատանքի արդյունքները թույլ են տալիս վստահաբար ասել, որ հանձին նրա՝ խորհրդային երաժշտական արևելագիտությունը ձեռք է բերել տաղանդավոր և հեռանկարային երիտասարդ հետազոտողի»:

Եվ իսկապես. երաժշտագետի հետագա աշխատություններում արծարծվելու էին երաժշտական արևելագիտության տարաբնույթ խնդիրները, մշակվելու և հրատարակվելու էր «Արևելքի ավանդական երաժշտության հիմունքները» դասընթացի ծրագիրը (Երևան, 1986), որը շուրջ երեսուն տարի վարում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

2004-ին Լ. Երնջակյանը Երևանում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Աշուղական սիրավեպը հայ-արևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան, 2009-ին էլ՝ պրոֆեսորի կոչում:

2004-ից Լ. Երնջակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող է: 2005-ից՝ ինստիտուտի գիտական խորհրդի և արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ: Լ. Երնջակյանը Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է 1985-ից, 2013-ից՝ Վարչության անդամ: 2015-ից Կոմիտասի նորաստեղծ թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է:

Լ. Երնջակյանը 2008-ին պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրով, իսկ 2013-ին արժանացել ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Տարիներ շարունակ լրջորեն ուսումնասիրելով Արևելքի դասական, ավանդական երաժշտության ժանրային համակարգը, գիտականորեն հիմնավորելով հայ մոնոդիկ երաժշտության և Մերձավոր ու Միջին Արևելքի ավանդական, ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի պատմատեսական ու գործնական-կատարողական հարցերը, ինչպես

նաև առաջադրելով Մերձավոր Արևելքի մշակութային փոխառնչություններին վերաբերող կարևոր դրույթներ՝ Լ. Երնջակյանը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով լույս է ընծայել 3 գիրք ու ավելի քան 70 գիտական հոդված, որոնց առանցքը հայ-իրանական և հայ-թուրքական երաժշտական փոխառնչությունների լուսաբանությունն է:

1991-ին Հայաստանի ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայել Լ. Երնջակյանի «Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից» աշխատությունը՝ նվիրված երկու հարևան երկրների՝ Հայաստանի և Իրանի երաժշտական արվեստների հնագույն ավանդույթների արժեքավորման, դրանց դրսևորման տարբեր ձևերի ու կառուցվածքային առանձնահատկությունների լուսաբանման հարցերին: Աշխատասիրությունը Արևելքի ժողովուրդների երաժշտական փոխառնչությունները լուսաբանող առաջին նշանակալից ուսումնասիրություններից է, որտեղ կարևորված են մշակութային ժառանգության, ազգային ինքնության և կատարողական ավանդույթի պահպանման խնդիրները: Հետազոտության մեջ քննարկված է դեռևս միջնադարյան հայ երաժշտական մշակույթում արմատավորված, ազգային ինքնատիպ երանգավորում և մեկնաբանում ստացած մուղամաթի արվեստը, ուրվագծված է հայ-իրանական երաժշտական կապերի ընդհանուր պատկերը:

Հայոց ավանդույթում հնագույն ժամանակներից մինչև այսօր հնչող «Սահարի» կոչվող նվագարանային խորհրդանիշ-մեղեդու համապարփակ քննությանն է նվիրված Լ. Երնջակյանի (Հ. Պիկիչյանի համահեղինակությամբ) «Հիմն Արևին. «Սահարին» հայ երաժշտական մշակույթում» էթնոերաժշտագիտական երկլեզու՝ հայերեն և անգլերեն, հետազոտությունը, որը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 1998 թ.: Աշխատության մեջ լուսաբանված են Արևին ձոնված այս ինքնատիպ հիմնի խորհրդանշական ու ծիսական-արարողական էությունը, դրա բազմաշերտ ակունքների գեղարվեստական մեկնաբանությունները ժողովրդապրոֆեսիոնալ և սիմֆոնիկ երաժշտարվեստում: Չափազանց ուշագրավ են Սահարու դիտարկումները ծիսական-պաշտամունքային համատեքստում և առավել հետաքրքիր՝ խորհրդանիշ-մեղեդու երաժշտահմաստային փոխարկումները հայ ժողովրդի կյանքի բեկումնային իրավիճակներում, ինչպես, օրինակ, Արցախյան շարժման տարիներին, երբ նոր վերածնունդ ապրած Սահարու շեփորականչերը դարձան ազգային ոգու և միասնության ազդարարները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ «Գիտություն» հրատարակչությունը 2009-ին լույս է ընծայել Լ. Երնջակյանի

«Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում» հիմնարար ուսումնասիրությունը՝ նվիրած հոր՝ արևելագետ Վարդգես Երնջակյանի անմոռաց հիշատակին: Մենագրության մեջ հանրագումարի են բերված երաժշտական արևելագիտության բնագավառում հեղինակի երկարամյա գիտական գործունեության արդյունքները, էթնոերաժշտագիտական քննությամբ պարզաբանված են հայ երաժշտապատմողական ավանդույթի ակունքները, զարգացման ուղին, տեղն ու դերը մերձավորարևելյան մշակութային փոխառնչությունների խառնարանում:

Միաժամանակ հեղինակն անդրադարձել է Արևելքի էպիկական երգաստեղծության պատմատեսական խնդիրներին, աշուղական սիրավեպերի կրոնամշակութային հիմքերին, դրանց կառույցներում ընդգրկված ծիսաառասպելական մոտիվներին: «Քյոռօղլի» և «Աշուղ Ղարիբ» սիրավեպ-դաստանների ազգային մեկնակերպերի համեմատական քննությամբ Լ. Երնջակյանը հաստատել է հայ երաժշտապատմողական ավանդույթի վաղեմի արմատների գոյությունը Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածներում, ինչպես նաև հայ աշուղների, սազանդարների, հավասարապես և մուղամաթահարների անուրանալի ավանդը Արևելքի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի զարգացման գործում: «Հայ երաժիշտները պատմականորեն տնական և մշտական շփման մեջ են եղել հարևան՝ մահմեդական շրջապատի հետ, բնականաբար, ձգտել են ընկալելի լինել իրենց արվեստով,– գրում է Երնջակյանը: – Այս բնական միտումն է մղել հայ երաժիշտներին տեսականորեն հարաբերակցել հայոց ութձայնը պարսկա-արաբական ձայնակարգերի հետ, դիմել օտար տերմինաբանությանը, ծնունդ տվել հայատառ թուրքերեն երգերի և արևելյան ոճ ու երանգավորում ունեցող գեղգեղանքներով հարուստ մեղեդիների ստեղծմանը: Այսուհանդերձ, արևելամետ մշակութային համատեքստում հայ աշուղներն օտարանուն կաղապարների մեջ պահպանել են ազգային արվեստի երաժշտալեզվական հիմքերը՝ միջազգային ասպարեզ դուրս բերելով հայկական մոնոդիկ երաժշտության մեղեդային հարստությունները» (էջ 22):

Աշխատության մեջ առաջին անգամ աշուղական արվեստի ակունքներն ուսումնասիրվել են մահմեդական Արևելքի և քրիստոնյա Հայաստանի մշակույթներին բնորոշ ու բաղդատվող երևույթների համատեքստում, իսկ երաժշտաբանաստեղծական սիրավեպ-դաստանները՝ ժանրի ծագումնաբանական, ձևակառուցվածքային, կատարողական և կրոնահավատալիքային բովանդակության դիտակետից:

Ջիվանու փոխադրությունների և մի շարք այլ հեղինակային ու անհեղինակ սիրավեպերի երաժշտաբանաստեղծական կառույցներն առաջին անգամ են դիտարկվել տեքստ-երաժշտություն, տեքստ-մշակույթ և տեքստ-էթնոիրականություն խորագրի ներքո: Բացահայտվել է հետազոտվող ժանրի ծագումնաբանական կապը հարևան ժողովուրդների՝ պարսիկների և թուրքերի երաժշտապատմողական արվեստի հետ, որտեղ սիրային դաստաններն առ այսօր մշակութային խորհրդանիշի համարում ունեն: Նման մոտեցմամբ հեղինակը խուսափել է երևույթների բացարձակացումից և հասել անկողմնակալ գիտական գնահատության:

Առանձնահատուկ հետաքրքրությամբ են ընթերցվում աշուղական մրցույթի արարողակարգին նվիրված բաժինները: Հեղինակի հետազոտությունները և փաստագրական նյութը վկայում են, որ աշուղական մրցույթի ավանդույթը զարգացել է պատմական Հայաստանի Կարս և Էրզրում նահանգներում, որոնց, ինչպես նաև այլ հայաբնակ շրջանների՝ Իգդիր, Անի, Սեբաստիա, երաժշտական ավանդույթները տարրալուծվել են մերձավորարևելյան աշուղական երգարվեստում:

Աշխատության գիտական արժանիքներից է աշուղական արվեստի արդի վիճակի քննությունը, ինչի շնորհիվ ուրվագծվում է ժանրի ազդեցության ոլորտը ժամանակակից երաժշտարվեստում:

Երևույթների բազմապլան քննության շնորհիվ Լ. Երնջակյանի սույն մենագրությունը, անշուշտ, նոր ուղիներ է բացում հետագա ուսումնասիրությունների համար՝ հայագիտության մեջ բարդ մշակութային համատեքստի լուսաբանմանը միտված անհրաժեշտ նոր հասկացությունների ու եզրերի ներմուծումով: Աշխատությունն արժեքավոր ներդրում է երաժշտական արևելագիտության բնագավառում:

Լ. Երնջակյանի գիտական խմբագրությամբ և գրախոսությամբ լույս է տեսել շուրջ 20 գիրք: 2005-ին նա կազմակերպել է հայ աշուղական երգարվեստին նվիրված գիտական կոնֆերանս և փառատոն: Կոնֆերանսի նյութերը նույն թվականին, Լ. Երնջակյանի խմբագրությամբ, հրատարակվել են առանձին ժողովածուի տեսքով:

Լ. Երնջակյանը հեղինակ է Հայաստանում և արտերկրում հրատարակված բազմաթիվ գիտական ու հանրագիտարանային հոդվածների: Միջազգային և հանրապետական գիտաժողովներում, միջազգային կոնգրեսներում ու քննարկումներում նա ներկայացնում է հայ ավանդական, ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտությունը՝ կարևորելով հայ երաժիշտների խոշոր ներդրումը Մերձավոր և Միջին Արևելքի մշակույթում,

հետամուտ լինելով նրանց գիտական ու կատարողական ավանդի միջազգային ճանաչմանն ու գնահատանքին:

Գիտական բեղմնավոր աշխատանքը Լ. Երնջակյանը հաջողությամբ զուգակցում է մանկավարժական գործունեության հետ: 1982-ից մինչ օրս նա դասավանդում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում: Կոնսերվատորիայի «Ժողովրդական նվագարաններ» ամբիոնի և երաժշտագիտական բաժնի ուսանողների համար Լ. Երնջակյանի մշակած հատուկ դասընթացի՝ «Արևելքի ավանդական երաժշտության հիմունքները» ծրագիրը, ինչպես նաև նրա աշխատությունները ուղենիշ են Արևելքի և հայ մոնոդիկ երաժշտության տարբեր ճյուղերի հարաբերակցության խնդիրներով հետաքրքրվող ուսանողների հետագա մասնագիտական կողմնորոշումների հարցում:

Լ. Երնջակյանի ղեկավարությամբ պաշտպանվել են մագիստրոսական թեզեր և թեկնածուական ատենախոսություններ: Այժմ նրա գիտական ղեկավարությամբ իրենց հետբուհական կրթությունն են շարունակում հայ և իրանցի ասպիրանտներ ու հայցորդներ:

Լ. Երնջակյանի գիտական և կազմակերպչական գործունեությունը, ելույթներն ու հրապարակումները, երիտասարդ մասնագետների պատրաստումը երաժշտական արևելագիտության՝ հայագիտության առաջնային կարևորություն ունեցող ոլորտներից մեկում, միահյուս են ազգային ինքնության և մշակութային քաղաքականության խնդիրներին հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում: Այդ խնդիրներին Լ. Երնջակյանը ծառայում է գիտական անաչառությամբ, առանց ազգայնական պաթոսի. թուրք-ադրբեջանական աշխատանքներում ներկայացված հայ երաժշտարվեստի ինքնությունը խեղաթյուրող սխալ մեկնաբանությունների ու նենգափոխումների դեմ են նրա մի շարք հոդվածներն ու զեկուցումները միջազգային գիտաժողովներում:

Վերստին շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի կապակցությամբ՝ մաղթում ենք քաջառողջ կյանքի երկար տարիներ և գիտաստեղծագործական նորանոր խիզախումներ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ